# ՄԱՅԻՍԻ 18-Ը ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

*ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ*

Չալթրի շրջանային պատմա-ազգագրական թանգարանի կոլեկտիվը առանձնահատուկ դեր է խաղում շրջանի մշակութային-լուսավորական կյանքում, լավագույն ազգային ավանդույթների պահպանման ու տարածման գործում:

Թանգարանի աշխատողները իրենց կզալի ավանդն են ներդնում նաև նախադպրոցական հասակի երեխաների և դպրոցականների հայրենասիրական դաստիարակության ասպարեզում: Նրանք դպրոցների ուսուցիչների և մանկապարտեզների վարիչների ու դաստիարակչուհիների հետ միասին հաճախ են կազմակերպում համատեղ միջոցառումներ, որոնց մասնակցում են բազմաթիվ երեխաներ:

Անչափ հետաքրքիր անցավ Չալթրի "Արևիկ" մանկապարտեզի սաների համար կազմակերպված միջոցառումը, որը նվիրված էր Զատկի տոնին: Մանուկները մեծ ուշադրությամբ լսեցին Չալթրի Սուրբ Համբարձում եկեղեցու քահանա Տեր Թադեոս Հայբարյանի խոսքը այդ հնամյա տոնի մասին:

Ապա երեխաները իրենք ելույթ ունեցան և վարպետորեն կատարեցին իրենց հանձնարարված դերերը, արտասանեցին, երգեցին ու պարեցին, մասնակցեցին կազմակերպված խաղերին ու կոնկուրսներին:

*Նկարներում՝ տեսարաններ անցացված միջոցառումից:*















